

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### «Հ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության փորձագետ Սուրեն Մամյանից

Ես՝ Սուրեն Մամյանս, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2019 թվականի օգոստոսի 15-ին կնքված թիվ 17 պայմանագրի համաձայն:

2019 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2020 թվականի փետրվարի 15-ը ուսումնասիրել եմ «ՀՀ Սյունիքի մարզի Մուցքի ոսկու հանքավայրում 2010–2018թթ. կատարված երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ՝ կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմամբ և պաշարների հաշվարկմամբ», «ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի վերագնահատման արդյունքների վերաբերյալ 01.01.2018թ. դրությամբ՝ պաշարների հաշվարկմամբ», «ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի հանքային դաշտի Լուսաջուրի ոսկեբեր երկրորդային քվարցիտների տեղամասերում 2017-2019 թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման արդյունքների վերաբերյալ՝ 01.11.2019թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ», «ՀՀ Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի վերագնահատման արդյունքների վերաբերյալ 01.01.2017թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի ոսկու հանքավայրի վերագնահատման մասին՝ շահագործական կոնդիցիաների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորմամբ և 01.01.2018թ.-ի դրությամբ պաշարների հաշվարկմամբ», «ՀՀ Սյունիքի մարզի Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայրում 2004-2007թթ. կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ՝ կոնդիցիաների չափանիշների տեխնիկատնտեսագիտական հիմնավորմամբ և 30.09.2017թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվություններով, ինչպես նաև «ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի հանքավայրի Լուսաջուրի տեղամասի պաշարների 01.04.2019թ. դրությամբ վերագնահատման և վերահաշվարկման վերաբերյալ» հաշվետվության լրամշակված տարբերակով ներկայացված նյութերի վերաբերյալ ներքոհիշյալ հարցերը.

- պաշարների եզրագծման հիմնավորվածության և հաշվարկների ճշտությունը,
- հանքավայրի շահագործման նախատեսվող եղանակի, բացման սխեման և մշակման համակարգը,
- օգտակար հանածոյի վերամշակման տեխնոլոգիական սխեման,
- հանքավայրի շահագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների հիմնավորվածությունը,
- կոնդիցիաների պարամետրերի կազմի ու չափաքանակների հիմնավորվածությունը,
- պաշարների շարժի հաշվարկման արդյունքների արժանահավատությունը, հանքավայրի և հանքավայրի շրջանի երկրաբանական կառուցվածքը,
- հանքավայրի (տեղամասի) երկրաբանական ուսումնասիրության համար ընտրված եղանակները, միջոցները և ծավալները,
- օգտակար հանածոյի որակատեխնոլոգիական հատկությունները,

- փորձաքննվող և ֆոնդային նյութերում զետեղված երկրաբանական տեղեկատվության զուգամիտությունը,

- ամփոփ և առաջնային երկրաբանական փաստագրման նյութերում զետեղված տեղեկատվության զուգամիտությունը:

Ներկայացրել եմ վերոնշյալ հաշվետվություններով ներկայացված նյութերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն:

Մասնակցել եմ նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման աշխատանքներին:

ՀՀ տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարարության  
ընդերքի վարչության փորձագետ



Սուրեն Մամյան